



Ministry of Justice of Armenia



The project is financed by the European Union



The project is implemented by IBF

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

**ՀՀ դատական օրենսգրքով նախատեսված դատավորների թեկնածուների թեստավորման ու նշանակման, ինչպես նաև դատավորների գնահատման ու առաջխաղացման ընթացակարգի վերաբերյալ քննարկման**

Քաղաք Երևան քսանվեցը օգոստոսի, երկու հազար տասնչորս թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում օգոստոսի 26-ին, Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկվեց ՀՀ դատական օրենսգրքով նախատեսված դատավորների թեկնածուների թեստավորման ու նշանակման, ինչպես նաև դատավորների գնահատման ու առաջխաղացման ընթացակարգը:

### ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

**Արտյոմ ԳԵՂԱՄՅԱՆ՝** ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

**Հովհաննես ՀՈՎԱԿԻՄՅԱՆ՝** ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կրտսեր մասնագետ

**Վիգեն ԽԱԶԱՏՐՅԱՆ՝** «Իրավունքի հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

**Տաթևիկ ԴԱՎԹՅԱՆ՝** «Քաունթերփարթ ինթերնեշնլ ինկ. Հայաստանյան ներկայացուցչություն» ԱՍ

**Մարատ ԱՏՈՎՄՅԱՆ՝** «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա»  
հասարակական կազմակերպություն

**Սոնա ԳԱՍՊԱՐՅԱՆ՝** Հայաստանում Եվրամիության պատվիրակության  
ներկայացուցիչ

**Թեմինե ՀԱՅՐՈՒՄՅԱՆ՝** EVDTV ծրագրի ներկայացուցիչ

**Գևորգ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»  
հասարակական կազմակերպություն

**Արման ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն»  
հասարակական կազմակերպություն

**Արշակ ԳԱՍՊԱՐՅԱՆ՝** «Սոցիալական արդարություն» հասարակական  
կազմակերպություն

**Սիրանուշ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ՝** ԵՄ «Budget Support» ծրագրի ներկայացուցիչ

**Մարգարիտա ՀԱԿՈԲՅԱՆ՝** ՀՀ ԱՆ տեղեկատվության և հասարակայնության հետ  
կապերի բաժնի փորձագետ

Քննարկումն արձանագրեց ՀՀ արդարադատության նախարարության  
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ **Լուսինե**

## **ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ:**

### **ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Բացման խոսք՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արտյոմ Գեղամյան
2. Զեկույց՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորների թեկնածուների թեստավորման ու նշանակման, ինչպես նաև դատավորների գնահատման ու առաջխաղացման ընթացակարգերի վերաբերյալ /Զեկուցող՝ ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կրտսեր մասնագետ Հովհաննես Հովակիմյան
3. Հարցուպատասխան

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ՝**

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Ա.ԳԵՂԱՄՅԱՆԸ** ողջունեց քննարկման մասնակիցներին և մեծապես կարևորեց նման ձևաչափով հանրային

քննարկումների անցկացումը:

Նրա խոսքով՝ այս քննարկումների ժամանակ ոչ միայն անդրադարձ է լինելու դատաիրավական համակարգի խնդիրներին, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնագիտական տեսանկյունից արված առաջարկությունները դրվելու են բարեփոխումների հիմքում:

Նախարարի տեղակալը կարևորեց օրակարգում ընդգրկված հարցի քննարկման անհրաժեշտությունը և պատրաստակամություն հայտնեց լսել բոլորի կարծիքներն ու կառուցողական առաջարկները:

### **ՕՐԱՎԱՐԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑ՝**

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ** հանդիպման մասնակիցներին ներկայացրեց ՀՀ դատական օրենսգրքում՝ դատավորներին նշանակելու, գնահատելու, խրախուսելու, կարգապահական տույժերի ենթարկելու և դատավորների անկախությունն ամրապնդելու կառուցակարգերի առնչությամբ կատարված փոփոխություններն ու լրացումները: Նա տեղեկացրեց, որ դատավորների թեկնածուների թեստավորումն ու նշանակումը կարգավորող համապատասխան օրենսդրությունը վերանայված և ընդունված է:

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ** խոսքով՝ այս փոփոխության շնորհիվ դատավորները կընտրվեն և կնշանակվեն Արդարադատության խորհրդի կողմից օբյեկտիվ և թափանցիկ գործընթացով՝ կիրառելով նաև համակարգչայնացված ընթացակարգ:

Դատավորների որակավորման քննությունների թափանցիկության ապահովման նպատակով՝

- Արդարադատության խորհրդի աշխատակազմը ապահովում է որակավորման գրավոր քննության ողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը քննասենյակից դուրս գտնվող տարածքում:
- Գրավոր քննությունների ողջ ընթացքը տեսաձայնագրվում է Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից:
- Հավակնորդն իրավունք ունի ստանալու գրավոր քննության մասի տեսաձայնագրության կրկնօրինակը և գրավոր քննության ստուգված ցանկացած աշխատանքի պատճենները:
- ՀՀ վճարեկ դատարանի նախագահը և արդարադատության նախարարը եռօրյա ժամկետում իրավունք ունեն պահաջելու գրավոր քննության ստուգված

աշխատանքների պատճենները:

- Հավակնորդների ստացած միավորներն արդյունքների ամփոփումից հետո անհապաղ հրապարակվում են պաշտոնական ինտերնետային կայքերում
- Որակավորման գրավոր քննության և Արդարադատության խորհրդում հարցազրույցի անցկացման ժամի և վայրի մասին հայտարարությունը հրապարակվում է պաշտոնական ինտերնետային կայքերում:

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ** տեղեկացմամբ՝ որակավորման գրավոր քննություններին և Արդարադատության խորհրդում հարցազրույցին ներկա կարող է լինել և դրանց ընթացքին հետևել՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի 1 ներկայացուցիչ, ՀՀ Արդարադատության նախարարի նշանակած 1 ներկայացուցիչ, ՀՀ Փաստաբանների պալատի նշանակած մինչև 3 փաստաբան, ինչպես նաև իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող ՀԿ-ների մինչև 5 ներկայացուցիչ:

Փոփոխության արդյունքում Արդարադատության խորհրդում հարցազրույցների ընթացակարգն արդեն կարգավորվում է օրենքով, իսկ վերանայված օրենսդրությունը կիրառվում է բոլոր նոր դատավորների թեկնածուների նկատմամբ:

Արդարադատության խորհրդի աշխատակազմը որակավորման գրավոր քննությունների հանրագումարային արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակը ներկայացնում է Արդարադատության խորհուրդ՝ հարցազրույց անցկացնելու նպատակով: Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների ցուցակը, յուրաքանչյուր հավակնորդի կրթության և հետբուհական աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները հրապարակում է պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հարցազրույցի ողջ ընթացքը, բացառությամբ Խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման, տեսաձայնագրվում է Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից: Հավակնորդն իրավունք ունի ստանալու Արդարադատության խորհրդում հարցազրույցի իրեն վերաբերող մասի տեսաձայնագրության կրկնօրինակը: **Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ տեղեկացմամբ,** Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքներով կազմվում է թեկնածությունների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի թափուր

տեղերի թվաքանակին հավասար թվաքանակի առավելագույն ձայներ ստացած թեկնածությունների ցուցակ:

Ցուցակը կազմելու ընթացքում հաշվի է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի քսանհինգ տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն հինգ տեղ: Արդարադատության խորհուրդը դատավորների թեկնածությունների ցուցակը ներկայացնում է Հանրապետության Նախագահի հաստատմանը: Հանրապետության Նախագահը ցուցակը ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում, հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած ցուցակը՝ իր համար ընդունելի թեկնածություններով: Հանրապետության Նախագահը ցուցակը ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում, հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած ցուցակը կամ այն վերադարձնում է Արդարադատության խորհուրդ՝ պահանջելով նոր քննարկում: Արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի վերադարձրած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում ՀՀ Նախագահին է ուղարկում փոփոխված ցուցակ կամ կարող է ՀՀ Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ: ՀՀ Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձվելու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի ըստ անհրաժեշտության կրկին հրավիրելու և լսելու խորհրդում հարցազրույցի ներկայացած հավակնորդներին

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ** խոսքով՝ Դատավորների գործունեությունը պաշտոնում նշանակման օրվան հաջորդող երկրորդ տարվանից հետո ենթակա է պարբերաբար գնահատման:

Վերջինի նպատակն է՝

- 1) բացահայտել և դատավորներին մատնանշել իրենց աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները.
  - 2) նպաստել դատավորների կողմից իրենց գործունեության վերլուծությանը.
  - 3) դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը:
  - 4) նպաստել դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:
3. Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է գնահատման

հանձնաժողովը:

Դատավորների գնահատումը իրականացվում է քանակական՝ **օբյեկտիվ**, և որակական՝ **սուբյեկտիվ**, չափանիշների հիման վրա: Գնահատման հանձնաժողովը դատավորների գործունեությունը գնահատում է՝ բարձր, լավ, միջին, ցածր:

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ** տեղեկացմամբ, ցածր գնահատվելու դեպքում գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին: Ցածր գնահատվելու դեպքում դատավորը չի կարող դիմել ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու՝ մինչև գնահատման արդյունքների հաջորդ ամփոփումը: Այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է բարձր, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար դիմելիս ունեն ցուցակում ընդգրկվելու նախապատվության իրավունք: Գնահատման հանձնաժողովի անդամ գործող դատավորների գնահատումն իրականացվում է նույն կարգով: Հանձնաժողովի գնահատվող անդամը չի մասնակցում իր գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ** խոսքով՝ կարգապահական վարույթը հարուցվում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը քննում է Արդարադատության խորհուրդը՝ ըստ էության, հանդես գալով որպես դատարան:

**Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆՆ** ընդգծեց, որ նախկինում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհրդի նիստերը անցկացվում էին դռնփակ, բացառությամբ միայն այն դեպքերի, երբ դատավորը պահանջում էր իր գործի հրապարակային քննություն: Ներայումս դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

**ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ**

Քննարկմանը ներկա քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները մի շարք առաջարկներ ներկայացրեցին՝ մասնավորապես դատավորների քննության ողջ գործընթացն առավել թափանցիկ դարձնելու, ապագա դատավորի անձնային հատկանիշները՝ նրա հուզական վիճակը, կողմնորոշվելու ունակությունը և այլ հոգեբանական հատկանիշների գնահատման համար համապատասխան մասնագետ-հոգեբաններ ներգրավելու վերաբերյալ:

**Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ** առաջարկեց դատավորների գործունեության գնահատման որակական չափանիշներում ներառել նաև կոգնիտիվ (իմացական) առանձնահատկությունները, ուշադրության կայունությունը, ընդհանուր և մասնագիտական ինտելեկտը, հիշողության գործընթացները և որակները, երևակայությունը, վերացարկման ունակությունը, անալիտիկ և սինթետիկ մտածողությունը, մտածողության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունն ու կոնկրետությունը: Անձնային այլ որակներում **Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ** կարևորեց նաև՝ հայրենասիրությունը, ներշնչվողականությունը, կոմֆորմիզմը, ինքնավտահոությունն ու օբյեկտիվ ինքնագնահատականը: **Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ**, քննարկմանը ներկա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին հորդորեց քննարկված ընթացակարգի վերաբերյալ այլ առաջարկներ ունենալու դեպքում գրավոր տարբերակով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հետագայում կատարվող օրենսդրական բարեփոխումների ժամանակ դրանք նույնպես հաշվի առնելու նպատակով:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

- Քննարկված թեմաների վերաբերյալ առաջարկ ունենալու դեպքում այն գրավոր ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ [press@moj.am](mailto:press@moj.am) էլեկտրոնային հասցեով:

Արձանագրությունը բաղկացած է 7 էջից:

